ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

N 44

« 25 » դեկտեմբերի 2017թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն ԱՇՈՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեզ է ներկայացվում Դաշտադեմ համայնքի ավագանու 18-ը դեկտեմբերի 2017 թվականի թիվ 15, 16, 17, 18, 19, 20, 21 և 22 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 15

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1918-Ն որոշմանը համապատասխան Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 125 դրական եզրակացությունը՝ Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող **02-035-0031-0028** կադաստրային ծածկագիրը կրող **0.361** հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասից **0.01 հա** հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը և այն դասել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կապի գործառնական նշանակության հողամասերի շարքը:
2. Համայնքի ղեկավարին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխման պետական գրանցում և այն ներառել հողերի հաշվառման ընթացիկ հաշվեկշռում:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Գևորգյան Արամ

Հովսեփյան Վահե

Ղուկասյան Աբգար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 16

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 29-րդ հոդվածի 4-րդ մասով, ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 -րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով Դաշտադեմ համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը և խորհրդակցական մարմնի նախնական համաձայնությունը, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի հողերի օգտագործման սխեման համաձայն կից հատակագծի, համաձայն որի առաջարկվում է համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրի՝ 0.3370 հա հողակտորը /ծածկագիր 02-035-550-001/ և 0.2920 հա հողակտորը /ծածկագիր 02-035-128-001/ տրամադրել քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց դասական աճուրդ-վաճառքով:
2. Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կազմել սույն որոշման 1-ին կետով նախատեսվող հողամասերի տրամադրման նպատակով հողաշինարարական գործ և դրան տալ համապատասխան ընթացք:

Կողմ – 3 Դեմ – 0 Չեռնպահ – 0

Գևորգյան Արամ

Հովսեփյան Վահե

Ղուկասյան Աբգար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 17

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10 -րդ հոդվածով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Դաշտադեմ համայնքի տարածքում սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ

գյուղական համայնքի ավագանու

2017 թ. դեկտեմբերի 18 -ի թիվ 17 որոշման

ԴԱՇՏԱԴԵՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ,

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 45 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 80 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 2000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 35000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 80000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 8000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 18000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 60000 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 200 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 45000դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 35000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 70000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 120 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 5000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1 000 դրամ:

Դաշտադեմ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 70000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 18

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ կետով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Արագածոտնի մարզի Դաշտադեմ համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2018 թվականի համար, սահմանել 170000 դրամ:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 19

ԴԱՇՏԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով և ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ բյուջետային տարվա ընթացքում խիստ անհրաժեշտության և ֆինանսական հնարավորությունների դեպքում՝ աշխատակազմը լրացուցիչ համալրել ժամկետային մինչև 2 աշխատողներով:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ

գյուղական համայնքի ավագանու

18-ը դեկտեմբերի 2017թ. թիվ 19 որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԱԴԵՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 13

Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 7

Մանկապարտեզ 2.75

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ	ամսեկան աշխատավարձի չափը	աշխատանքային ամիսներ
Համայնքի ղեկավար	1	170000	170000	12
Համայնքային ծառայության պաշտոններ				
Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	132000	132000	12
Գլխավոր մասնագետ 2.3-1	1	130000	130000	12
Առաջատար մասնագետ 3. 1-2	1	90000	90000	12
Մշակույթի տուն- գրադարան				
Մշակույթի տան տնօրեն	0.5	89290	44645	12
Սպասարկող անձնակազմ				
Փականագործ	1	72750	72750	12
Խմելաջրերի հսկիչ	0.5	77900	38950	12
Հարկահավաք	0.5	90000	45000	12
Հավաքարար	0.5	80000	40000	12
Մանկապարտեզ				
Դաստիարակ-մեթոդիստ	0.75	88187	66140	12
Դաստիարակ	0.5	99210	49605	12
Խոհարար	0.75	77900	58425	6
Հավաքարար-լվացքարար	0.75	72750	54560	6

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 20

2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի 2017 թվականի սեփականության գույքագրումն փաստաթղթերը համաձայն հավելվածի 1-ի:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

Հավելված N 1

ՀՀ Արագածոտնի մարզի Դաշտադեմ

գյուղական համայնքի ավագանու

18-ը դեկտեմբերի 2017թ. թիվ 20 որոշման

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ

1	Ակումբ-գրասենյակ	1973	1	5004943
2	բուժ-կետի շենք	1992	1	418608
3	ջրամբար	1965	1	2282338
4	մանկապարտեզի շենք	1984	1	11600212
5	չիրկիզվող կահարան	1970	1	21592
6	սեղան հատուկ	1970	1	22123
7	գրասեղան	1970	1	10619
8	կշեռք վոզավոյ10տ	1972	1	87962
9	կշեռք վոզավոյ 10տ	1972	1	87962
10	ջրարբիացման ներքին ցանց	1982	1	88300
11	կշեռք վոզավոյ05.տ	1970	1	42476
12	Իրինդ-Դաշտադեմխմելաջ	2003	1	74979788
13	համակարգիչ Պց սենսոր	2005	1	165300
14	պրինտեր	2006	1	82800
15	համակարգիչներ	2007	3	788400
16	դիսկակիր	2007	1	25000
17	սեղան ղեկավարի	2007	1	100000
18	աթոռ ղեկավարի	2007	1	40000
19	սեղան գրասենյակային	2007	5	175000
20	սեղան համակարգչային	2007	5	175000
21	օֆիսային բազկաթոռ	2007	2	60000
22	օֆիսային բազկաթոռ	2007	5	148500

23	սեղան դիմադիր	2007	1	39000
24	աթոռների կոմպլեկտ	2007	15	80000
25	խոտհնձիչ մեքենա	2008	1	680000
26	մահճակալ մանկական	2008	5	135000
27	սեղան դիմադիր	2008	5	160000
28	պահարան	2008	1	135000
30	համակարգիչ պենտիում4	2009	2	196000
31	մոնիտոր ելջի	2009	1	54000
32	համակարգիչ պենտիում	2009	1	120000
33	մոնիտոր	2009	2	130000
34	լազաերային տպիչ քանոն	2009	1	58500
35	մահճակալ մանկական	2009	20	800000
36	մանկական սեղան	2009	5	75000
37	արդուկ	2009	1	7000
38	փողոցային լուսավորության ցանց 1350 մ	2013	45	3450000
39	Խմելաջրի ներքին ցանց	2011	5159 գ/մ	62000000
40	WI-FI երթուղիչ սարք	2016	1	95000
41	Տեսախցիկ	2017	1	170000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 21

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 19 ենթակետով և ՀՀ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» 14-րդ հոդվածի 1-ին կետով, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Դաշտադեմ համայնքում աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար ամսեկան աղբահանության վճարի դրույքաչափ սահմանել յուրաքանչյուր բնակչի համար 100 /հարյուր/ դրամ:
2. Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար 50 /հիսուն/ դրամ:
3. Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար 3 /երեք/ դրամ:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Դաշտադեմ համայնք, 1 փողոց, 22, Հեռ. 093 909 918

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2017 թվականի N 22

ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը և նախորդ տարիների փաստացի ցուցանիշները, Դաշտադեմ համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դաշտադեմ համայնքի 2018 թվականի բյուջեն համաձայն հավելվածների:
2. Թույլատրել Դաշտադեմ համայնքի ղեկավարին 2018 թվականի ընթացքում համայնքի բյուջեում կատարել 15 տոկոսի չափով վերաբաշխումներ:

Կողմ – 3 Գևորգյան Արամ

Ղուկասյան Աբգար

Հովսեփյան Վահե

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 18

գ. Դաշտադեմ